

բազների բացատրութեան նրանք աւելի են հաւատում, քան ուրիշ որևէ է նախապաշարմունքի: Միւսները կամաց-կամաց մոռացւում, անտես են առնւում, մինչդեռ երազին համարեա ամենքը հաւատում են: Այդ բանին վկայ ունին նրանք բացի ս. Գրքում պատմուած օրինակներից, և իրանց անձնական կեանքից բազմաթիւ դէպքեր, երբ այս կամ այն երազից յետոյ յայտնի բաներ են պատահել: Մեծ հետաքրքրութիւնով տեսնողը զարթնելուն պէս սկսում է պատմել տանը, հարևանին կամ ընկերոջ տեսած երազը, աշխատելով նրանց կարծիքն իմանալ: Երազը մեկնելու համար սովորաբար իւրաքանչյուրը օգտում է պապիրից լսած բացատրութիւնից: Երբեմն ծանր և սարսափելի երազների համար զիմում են տէրտէրի և կամ ուրիշ խելօքների խորդդին, իրանց լուզուած ու անհանդիստ հոգուն բաւականութիւն տալու համար:

Երազում տեսած ամեն մի բան իր մեկնութիւնն ունի, որ այսուղ աւելորդ ենք համարում մէջ բերել:

Մարմնի անդամների խոռոշ: Արանք էլ են այլ և այլ բացատրութիւն տալիս մարմնի անդամների խաղին, թէև խիստ կերպով՝ ոչ ոք նշանակութիւն չի տալիս այդ բանին և սովորաբար անուշաղիր են թողնում: Աչքը որ խաղալ, ասում են, չը պէտք է ուրիշին ասել, թէ չէ աչքը լաց կըլինի:

Զեռքը որ քոր գալ, թէ որ աջը լինի, մէկից փող կը գալ, խոկ թէ որ ձախը՝ մէկին փող կըտայ:

Ոտի տակը որ քոր գալ, ճանապարհ կը գնայ: Եւ այն:

### Տ Օ Ն Ե Ր

Նոր-ասքի: Նոր-տարու. նախորդ օրին (զեկտ. 31) «Մաղկըմուտ» են ասում: Այդ օրը կանանցից նրանք, որոնց որդիքը ծաղիկ չեն քաշել, ոչինչ չեն անիլ, իսկ առհասարակ բոլորն էլ «ուօկ» չեն մանիլ, գլխները չեն լուանալ, որ մազը չսպիտակի և այլն: Այդ օրը եօթը տեսակ կերակուր ու տեսակ-տեսակ հացեր են եփում. եփած կերակուրն էլ ոմանք մինչև երեք օր ուսում են: Այդ կերակուրներն ու հացի տեսակներն

Են. լորեա, եփած «լաղտ» (սիմինտը), «բօնջրով ապուր», «արձով ապուր», պասուց «ճաշ», «քեաստօնա» դղում, չիր, «խօրօշ» դգմով ու պրասով հաց, «բաղլօմա» (սաջի վրայ եփած տափակ հաց), «քարհաց» (քարի մէջ եփած հաց), «փուռնիտ» (կլոր, գունս հաց) և այլն:

«Ծաղկըմուտին՝ տուն-ելթիկ աւլում, աւլածը ջուրն են թափում»:

Այդ օրը «ջադուկի փուշ» (մասուրի) են հաւաքում, տան ելթկին ու բոլոր շէնքերի շէմերին դնում, նոյնակս և սնդուկ-ների դրսի կողմը, գուներին մօտիկ, որ փշի վախից չարերն ու ջատուն չը գան ու չը մտնեն ներսը:

«Ծաղկըմուտի» օրը մարդիկ իրանց բոլոր հաշիւները պէտք է մաքրեն. առնելիքները առնեն, տալիքները տան:

Այդ օրը զիշերով դուրսը մանգալ լաւ չեն համարում:

Ասում են, որ այդ զիշերը «սօնդերքը» պէտք է փուռը զցել կամ մի խորը տեղ, և թողնել ալնտեղ մինչև Ջրօրհնէնքը, թէ չէ գիշերը դուրս ելլողին «կօնտօլօզը» նրանով եօթն ան-զամ «կը սօնդերքէ»:

«Ծաղկըմուտի» զիշերը ջրերը մի ժամկ չափ կանդնում են և ոսկի արծաթ դառնում, բայց այդ բոպէին՝ ջուրը գնացող մարդուն աչքին մի սարսափելի բան կերևալ. վախից կը փախչի մօտից և մինչեւ Շանզամ ջրի վրայից չանցնի, «կօնտօլօզը» կը խփի նրան:

Այդ զիշերը ծառերն էլ ծունը են անում, երկրպագութիւն տալիս Արարչին:

«Ծաղկըմուտի» զիշերը այս սովորութիւնն էլ կայ. մինչդեռ տնեցիք ամենքը բոլորուած՝ տաքանում են օջախի շուրջը, յանկարծ դրսից դռանը մի բան են խփում, դռուր՝ բացում է, ներս է ընկնում մի «հարիդա», մէջը քար դրած, երկալն չուանլից կապուած՝ զցողը չի երևում, հեռուից սպասում է: Տանը իբրարանցում է ընկնում, սկսում է ծիծաղ, ուրախութիւն. «Հարիգան դէս ու դէն են քաշքշում, բայց էլի զցողը հեռու է մնում: Ցետոյ թողնում են ձեռքից, չուանը դրսից քաշում են, բայց չի անցնում մի քանի բոպէ, կրկնում է նոյնը,

մինչև որ տեսնելով որ չի լինում, դրսեցին դադար չի տալիս, կաղին, ընկող են լցնում մէջը, և ապա թէ աներևոյթ մարզը ձեռք է քաշում, հեռանում տնից:

«Ծաղկըմուտի իրիկուան մի սեղան են սարքում, վրան «իբրիգով» (աման) ջուր դնում, երկու հատ էլ «օնի» (ծառ է, գրան) ցախ և թողնում մինչի առաւօտ: Մի խնձորի մէջ էլ, կամ թէ խնձոր չը դանուի, «քեաստոնի» մէջ արծաթէ փող են դնում և պահում մինչի առաւօտ: Առաւօտեան խնձորն իրար մէջ բաժնում են՝ փողն ում որ ընկնում է, մի քիչ «լազտ», լորիա ու կարմիր «լիլիկ» (վայրի ծառերի բերած կարմիր հատիկները) գրապանը լցած, վերցնում է սեղանը և մի տղի հետ դնում է գոմը, առաջ աջ ոտը դնում, յետոյ ներս մտնում: Սեղանը դնում է գետնին, գրապանից հանում լորիան ու «լիլիկը» և շաղ տալիս մալերի վրայ, ասելով «խատ ու խլինջ (խատուտեկի), էք ու բացլիկ. մեղուլ պէս շատնաք»: Այդ ասելուց յետոյ սեղանի վրայից մի-մի կտոր բան բերանն են դնում, յետոյ կապում են «աշառը» (օրձ հորթը) և սեղանի հետ տուն բերում: «Աշառի» առաջ «եմ» (ուտեսոյ) են դնում, եղջւրներին մոմ վառում, վերջն էլ նստում, գոմից բերած սեղանի հացը ուտում:

Նոր-ուարին թէև կիրակի չեն պահում և մէկէլ օրերի պէս բանում են, բայց շատ բաներ են պատմում այդ օրուայ առիթով: Լուսադէմին, դեռ լոյսն ու մութը չը բաժնուած, ամեն կողմից հրացանների տրաքտրաքոյով աւետում են նոր կեանքն ու նոր բախտը:

Այդ օրը առհասարակ ամեն բան շնորհաւորում են, սկսած իրանցից ու իրանց մօտիկների տներից ու «կօրօբներից» մինչև իրանց գոմերն ու մալերը, բոլորին նոր բախտ ու աջողութիւն են մաղթում: Շնորհաւորելու եկողներին մի-մի բան տալիս են եկիած «լազտ», կաղին, ընկող և այլն: Առաւօտը, մալերին շնորհաւորելու գնացած ժամանակը, նախապէս ծառի մի քանի ճղներ մի քիչ խօթում են կրակը և ապա տանում, մալերին նրանցով թեթև շփում:

Իրար տուն շատ քչերն են դնում շնորհաւորելու. աւելի պատահում է, որ խնդրեն դրացուն, որի ոտը փորձել են, վաղ-

վաղ գայ իրանց տունը՝ շնորհաւորելու. ում ոտք որ լաւ է զալիս, այն տարին այն տնից բախտն անպակաս կը լինի և հակառակ:

Այդ օրը առաջին սրա բռնողը լաւ որսորդ կը լինի:

Այդ օրը նոյնպէս վաղ-վաղ, թռչունը դեռ չը զարթած, գնում են ջուրը, լուացում, որ ջրի հետ իրանց ցաւն էլ զնայ, և ապա հետներն էլ ջուր են բերում տուն: Առաւոտեան բոլորն էլ լուացում են օջախի շուրջը, ում լուացուած տեղից որ մըշիւն դուրս գայ, նա բախտ կունենալ:

Այդ օրը մէկմէկու փոխ բան չեն տալ, թէ չէ՝ բախտը յետ կերթայ:

Կծու և «վառեցուկ» կերակուր էլ չեն ուտիլ, ոչ էլ իրար թթու խօսք կատեն, որ ողջ տարին քաղցր ու անուշ անցնի:

Այդ օրը ընկոյզ կամ կաղին կոտրելը լաւ չեն համարում-արօր շատ կը կոտրուի:

Այդ առաւոտը բորիկ մանդալն էլ լաւ չէ, ոտին «մէրզը-մուկ» կը լինի:

Ուրիշեց բան չեն ուզիլ, որ շատ «ուզուկ» չը լինին:

Զահէլները կայնով փայտ չեն կոտրել, կոթը կը կոտրուի և միշտ «կեօթ կոտրուկ» կը լինին:

Այդ օր լծողն էլ արօր շատ կը կոտրէ:

Նոր-տարու առաւոտը երկու տղայ անխօս վեր են կենում. մէկը վեր է ելլում տան «ծածելը» (կաղնի ճղներից հիւսուած առաստաղ, ուր սովորաբար բուն են դնում մկները) և ձեռքի փայտով, կացնով կամ քարով թըքթըք սկսում է խփել «ծածելին», առաստաղի փայտերին կամ զան վերի շէմին: Մէկէլը ներքեց հարցնում է. «Բնչ կընես»: Վերևինն ասում է. «Մուկ կըյտիմ կու (կտրել)»: — «Նեօր (ուր) զրկես պիտի»: — «Ստրմբօլ, կամ թէ՝ Սև ծովուն ինտին, կամ թէ՝ այս ինչի տունը (չը սիրած մարդու անուն է տալիս): Էլի թըքթըք խը-փում է փայտին. տակից էլի հարցնում է. «Բնչ կընես»: — Յաւ կըյտեմ կու»: — «Նեօր զրկես պիտի»: — Այս ինչ տեղ, մի հեռու տեղի անուն տալով, և այն այսպէս հարց ու պատասխանով լիշտակում են տան բոլոր պակասները, աշխատելով նրանց իրանցից մի հեռու տեղ կորցնել:

Նոյն առաւտօտը երկու տղայ անխօս գնում են չը բերող ինձութենու կամ տանձենու մօտ, և երբ մէկը կացնով տալու է անում ծառին ասելով՝ «մէլլա (պտուղ) բերել չես, կտրեմ պիտի», մէկէլլը վրայ է բերում. «Կտրել մի. բերէ կու»։ Այդպէս կրկնում են երեք անդամ։ Այն տարին ծառը անպատճառ շատ պտուղ կը տար։

**Ծառանդ:** Ծաննդի առաջի օրը, առաւտօտեան և երեկոյեան ժամից յետով, շատերը սովորութիւն ունին ժամւորներին «քաթալ» բաժնելու։ Նրանց «քաթան» կոր, անխմոր բաղարջ հաց է, սովորական ցորենի հացի պէս, ոչ իւղ ունի և ոչ էլ մի առանձին անուշ համ։ Ցորենի հետ սովորաբար սիմինդրի ալիւր էլ են խառնում. մի քիչ էլ մեղրածուր կամ «բէքմէզ»։ «Քաթալ» բաժանում են նոյնպէս աւագ-հինգշաբթի օրը և մէկէլ Զատկի ճրագալուցին։

Ծաննդի ճրագալուցի իրիկուան «ճաշի» մէջ «տուբին» (չը մանուսղ բրդի տակուցք) են դնում ու վառում։

Այդ իրիկուն՝ տան աղջիկը մի գդալ մածուն պիտի ուտի դռան յետևը, որ կովերը էգ փուղիկ բերեն։

Ելի ասում են, ով որ այդ իրիկունը լողանայ, նրա գարդերը չուրը կը տանի։

Ճրագալուցի իրիկուան, ինչպէս և ամեն տաղաւար նաւակատիք օրիրի իրիկուներին, տանը մոմ են վառում, խունկ ծխում և ձախով աղօթում։ Հասարակ կիրակնամուտերին մոմ վառելու սովորութիւն չունին։

**Տէրընդառ:** (Տեսառնընդառաջ)։ Պատմում են, որ Տէրընտագի իրիկուան, առաջ, իրանց հները եկեղեցու դռու տաշեղ են տարել, տէրտէրները վառել են և աղօթել, իսկ մնացած մոխիրը իրանք տանելիս են եղել իրանց տները դեղի համար, ցաւած տեղը քսելու։ Հիմա չը կայ այդ սովորութիւնը։

**Զատկէ.** Աւագ-հինգշաբթին ձուերն եփում են, պահում մինչև շաբաթ։ Այդ օրը ճրագալուծին, ամէնքը գրպանները մէկ-մէկ ձու դրած, գնում են եկեղեցի, և երբ բոլորը վառում են մոմերը, փոքրերը գրպաններից դուրս են հանում ձուերը և ուտում։ Զատկի կիրակի օրը, վաղ առաւտօտեան ներկում են ձուերը. միայն կարմիր չեն ներկում, այլ ամեն գոյնի. դեղին, կարմիր,

կանաչ, կապուտ, նարնջագոյն և այլն։ Ներկելու համար օդ-տըւում են սովորաբար մի քանի ծառերի կեղևից ու փայտից. սոխի կճեպից և մի քանի ներկերից։

Նրանց Զատիկը շատ ուրախ է անցնում. իրար մօտ շնորհաւորելու համար դնալ-գալու սովորութիւն չունին։ Այդ օրուան գլխաւոր հանդէսը ձուի կռւեցնելն ու խաղն է։ Մեծ, փոքր ձու են կռւեցնում, ու խաղողնում, խփելով, գլորուելով ու նշան դնելով։ Այդ օրուայ ուտելիքներն են՝ ձուաձեղը, խմորեղէնն ու կաթնսեղէնը։

Բայց Զատիկից աւելի աղմկալի և ուրախ է անցնում նըրանց «Մեռելոցը», որ թէև երկուշարթին է նշանակուած, բայց նրանց մօտ ամեն մի դիւլ իր օրն ունի ընտրած, այնքան որ նոր-կիրակին չանցնեն, իսկ երբեմն երբ լաւ օրեր չեն լինում, նրանից էլ դէնն են անցնում։ Այդ օրը թէև մեռելոց է, բայց խկավէս նրանց համար ուրախութեան օր է, նրանց հասարակական տօնն է, երբ ամբողջ զիւղը, մեծ, փոքր, կին, տղամարդ մասնակցում են իրանց բերած հասարակական հացկերոցին, տղամարդիկ ու կանալք իրարից ջոկ-ջոկ. երբեմն աւելի հանդէս տալու համար՝ գօտեմարտ, նուագ ու պար են սարքում։ Զատիկի ճրագալոցից իրիկուան և առաւօտը, նորտարու պէս, հրացաններ են արձակում։

Հայեացման օրը առհասարակ ամենքը կաթ ու կաթնապուր են ուտում։ Այդ օրին նրանք «կաթ ուտիչ» են աօտւմ։ Համբարձման վերաբերեալ այս աւանդութիւններն են պատմում։

Քրիստոսի երկինք վերանալու ժամանակ, իր զերեզմանի քարն էլ է ուզել հետը բարձրանալ, բայց Քրիստոս Տէրը չէ թողել. բրով հրել է ներքեւ, և քարը անշարժ մնացել է իր տեղում։

Քրիստոս համբառնալու ժամանակ ինն օր ճամփին է մնացել, ամէն մի օր մի հրեշտակի մօտ հիւր։ Այդ այցելութեան համար է, որ իննը դաս հրեշտակի պատ են պահում։

